ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ НОР АРТАГЕРСА

15-ը հունվարի, 2013 թվական
Թիվ-

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Նոր Արտագերսի գյուղապետարանը կից Ձեզ է ներկայացնում համայնքի 2013թ. հուլիսի 9-ին կայացած առաջին կիսամյակի գյուղապետարանի գործունեության վերաբերյալ հաշվետվություն:

Առդիր 2 թերթ

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. Հակոբյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013թ. հուլիսի 9-ին Նոր Արտագերս գյուղական համայնքի ժողով՝ մասնակցությամբ համայնքի 45 անդամների:

Ժողովին ներկա էին դպրոցի, բուժ. ամբուլատորիայի և համայնքապետարանի աշխատակիցները:

Ժողովը նախագահում էր համայնքի ղեկավար Ս. Հակոբյանը, քարտուղարում էր գյուղապետարանի աշխ. Լ. Վասիլյանը:

Ժողովը հաստատում է հետևյալ օրակարգը:

1. Համայնքի ղեկավարի 2013 թ. առաջին կիսամյակի գյուղապետարանի գործունեության վերաբերյալ հաշվետվություն:

2. Համայնքի հիմնախնդիրները:

1.Լսեցին.

Համայնքի ղեկավարի 2013 թ. առաջին կիսամյակի գյուղապետարանի գործունեության վերաբերյալ հաշվետվություն:

1) Մինչև գարնան գյուղատնտեսական աշխատանքների սկսվելը կատարվել է համայնքի ներտնտեսային ջրատարների մաքրման աշխատանքները:

2) Հիմնանորոգվել է համայնքի խմելաջրի բաքը պահող պատը և ձմռան ցրտից վնասված խողովակները:

3) 2013թ. առաջին կիսամյակում գումարվել է ավագանու 3 նիստ:

4) Գյուղապետարանի կողմից որպես դրամական պարգև տրամադրվել է դպրոցի ավարտական դասարանի աշակերտներին յուրաքանչյուրին 5000-ական դրամ, դասղեկին 10000-ական դրամ:

5) Արցախյան պատերազմի մասնակիցներին տրամադրվել է յուրաքանչյուրին 20000-ական դրամ:

6) Ընթացքի մեջ է համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքները:

Ժողովը քննարկվեց մայիսի 12-ին տեղացած կարկուտի հետևանքով, ազգաբնակչությանը որևիցէ օգնություն ցուցաբերելու մասին նախօրօք կազմված հանձնաժողովի կողմից:

Կարկուտի հետևանքով տուժած հողօգտագործողներին բաժանվել է պետության կողմից տրամադրված սերմեր ենթացանքս կատարելու համար:

Տրամադրվել է նաև 3 տոննա դիզելային վառելանյութ, որի բաշխումը ընթքցքի մեջ է:

Համայնքի բնակիչներից 50 անապահով ընտանիք որպես օգնություն պետության կողմից ստացել են 50000-ական դրամ, 46 ընտանիք <<Կարմիր խաչ-ի>> կողմից ստացել են մարդասիրական օգնություն:

Օգնության են ներկայացվել նաև համայնքի շուրջ 27 ուսանողների անունները, որոնք սովորում են տարբեր ուսումնական հաստատություններում:

Որոշեցին- Հանձնարարել համայնքի ղեկավար Ս. Հակոբյանի վերացնել համայնքում առկա թերությունները, կարգ ու կանոն հաստատել համայնքում:

Պատշաճ կերպով կատարել գյուղամիջյան պուրակի և հուշարձանին հարող տարածքի բարեկարգման աշխատանքները:

Լսեցին. 2 Համայնքի հիմնախնդիրները

Համայնքի հիմնախնդիրներն են.

1. Կուտուրայի տան հիմնանորոգում
2. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում
3. Գյուղամիջյան ճանապարհի 400 մետր հատվածի հիմնանորոգում
4. Խմելաջրի ջրագծի հիմնանորոգում

Որոշեցին. Հանձնարարել համայնքի ղեկավար Ս. Հակոբյանին, զբաղվել համայնքի հիմնախնդրիների իրականացմանը:

ՆՈՐ ԱՐՏԿԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. Հակոբյան